

# ՍԱՂՄՈՍ 59

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Թշնամիներից ազատվելու աղոթք	Ամբարշտի հաստատ դատաստանը	Թշնամիներից ազատվելու աղոթք	Ապահովության աղոթք	Ամբարշտի դեմ
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին . «Մի՛ կործանիր» եղանակով, Դավթի մտորումը, երբ նրա տունը պաշարել էին նրան սպանելու համար				
59:1-8	59:1-2  59:3-4  59:5  59:6-7  59:8-9	59:1-2  59:3-4  59:5  59:6-7  59:8-10	59:1-2  59:3-4  59:5  59:6-7  59:8-10	59:1-2  59:3-4բ  59:4գ-5  59:6  59:7  59:8-9ա
59:9-15	59:10  59:11-13  59:14-15	59:11-13  59:14-15	59:11-13  59:14-15	59:9բ-10  59:11  59:12  59:13  59:14  59:15
59:16-17	59:16-17	59:16-17	59:16-17	59:16  59:17

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ** («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Դարձյալ հանդիպում ենք այն հարցին, թե ովքեր են նրա «թշնամիները»: Այս Սաղմոսում կարծես թե այն վերաբերում է Հեթանոս զավթիչներին (տես՝ Սաղմ. 59:5, 6, 7, 8, 11, 13, 14, 15): Սաղմոս 59:8 հիշեցնում է Սաղմոս 2:4-ը:

Բ. Սաղմոսերգուն հստակ սահմանում է, որ նրա վրա հարձակվել են, սակայն ոչ թե, որ ինքը ինչ որ բան է արել (տես՝ Սաղմ. 59:3գ, 4ա): Հարձակումը կարծես թե այն բանի համար է, որ ինքը կամ նրանք ՅԱՀՎԵԻ ժողովուրդն են:

Գ. Նկատե՛ք Ուխտի Աստծո անունները՝

1. Ով իմ Աստված, Սաղմ. 59:1 – հավանաբար *Էլոհիմ*, ինչպես 8-րդ համարն է՝ հաջորդ խոսքի վերջին տառի հետ միասին
2. Ով ՅԱՀՎԵ, Սաղմ. 59:3,5,8 – BDB 217
3. Չորությունների Աստված (*Էլոհիմ Սաբաուիթ*), Սաղմ. 59:5 – BDB 43 և 838, ռազմական նշանակությունները
4. Իսրայելի Աստվածը, Սաղմ. 59:5 – BDB 43 ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ BDB 975
5. Ով իմ զորություն – BDB 738
6. *Աստված* իմ ամրոցն է՝ պաշտպանությունը, Սաղմ. 59:9 – BDB 43 և BDB 960 I
7. Իմ ողորմության Աստվածն է, Սաղմ. 59:10, 17 – BDB 43 և BDB 338
8. Ով ՏԵՐ, մեր վահանը կամ *Ադոնը*՝ մեր վահանն է, Սաղմ. 59:11 – BDB 10 և BDB 171
9. Աստված (*Էլոհիմ*), Սաղմ. 59:13 – BDB 43 (*Elohim*)
10. Ով իմ զորություն, Սաղմ. 59:16 – BDB 738
11. Ով Աստված, իմ պաշտպանը, Սաղմ. 59:17 – նույնը ինչ #5

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 59:1-8**

<sup>1</sup>Փրկի՛ր ինձ իմ թշնամիներից, ո՛վ իմ Աստված .

Իմ վրա եկողներից ինձ պաշտպանի՛ր,

<sup>2</sup>Փրկի՛ր ինձ անօրենություն գործողներից,

Ու արյունահեղ մարդկանցից ինձ ազատի՛ր:

<sup>3</sup>Քանի որ ահա դարանակալել են ինձ բռնելու համար .

Հզոր մարդիկ հավաքվել են ինձ վրա,

Ո՛չ թե հանցանքիս կամ մեղքիս համար, ո՛վ ՏԵՐ:

<sup>4</sup>Առանց իմ մեղքի՝ վրաս վազեցին ու պատրաստվեցին .

Ինձ օգնելու արթնացի՛ր, և տե՛ս:

<sup>5</sup>Դ՛ո՛ւ, Չորաց ՏԵՐ Աստված, Աստված Իսրայելի,

Արթնացի՛ր ու այցելի՛ր բոլոր հեթանոսներին .

**Ոչ մի չար անօրենի մի՛ գթա: Սելա:**

**Նրանք կվերադառնան երեկոյան, շան պես կռռնան**

**Ու քաղաքի շուրջը կպտտվեն:**

**Մի անգամ վայրահաչում են իրենց բերաններով,**

**Նրանց շրթունքի վրա սրեր կան,**

**Քանի որ ասում են. «Ո՛վ է լսելու»:**

**Քայց Դու, ո՛վ ՏԵՐ, նրանց վրա ծիծաղելու ես,**

**Ծաղրելու ես բոլոր հեթանոսներին:**

**59:1-2** Նկատեք, որ Սաղմոսը սկսում է երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ (թշնամիներից ազատվելու աղոթքի խնդրանքներ):

1. ազատիր, Սաղմ. 59:1 – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. ազատիր, Սաղմ. 59:2 – նույնը ինչ առաջին կետը

3. փրկիր – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 28:9, 31:16, 71:2, 86:2, 16:

Երկուսն էլ կիրառվում են Սաղմ. 7:1, 22:20-21, 31:2-3, 15-16, 33:16-17, 34:17-18, և այլն: Սա պարբերաբար կրկնվող օգնության աղոթք է:

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես են նկարագրվում թշնամիները:

1. իմ դեմ բարձրացողները

2. անօրենություն գործողներ

3. արյունահեղ մարդիկ

Այս Սաղմոսում թշնամիները կարծես թե լինեն օտար զավթիչներ:

1. պատժիր բոլոր ազգերին, Սաղմ. 59:5

2. կպտտվեն քաղաքի շուրջը (այսինքն՝ կպաշարեն), Սաղմ. 59:6

3. վայրահաչում են . . . սրեր, Սաղմ. 59:7

4. ՅԱՀՎԵՆ ծիծաղում է բոլոր հեթանոսների վրա, Սաղմ. 59:8

5. Աստված է տիրում Հակոբում, մինչև երկրի ծայրերը, Սաղմ. 59:13

6. քաղաքի շուրջն են պտտվում, Սաղմ. 59:14 (տես՝ #2)

7. Սաղմ. 59:15 պաշարման նկարագրություն է

**59:3-4ա** Այս համարներում ԵՉԱԿԻ «ինձ» նկատի ունի Իսրայելի առաջնորդին: Նրա վրա հարձակումը ուխտի ժողովրդի վրա հարձակում է: Հնարավոր է զարմանաք, թե արդյոք այս օտարազգի զավթիչները ունեին ներսից օգնություն:

Նկատե՛ք, որ հեղինակը պաշտպանում է իր սեփական արդարությունը՝ պնդելով, որ ինքը հարձակման է ենթարկվել առանց պատճառի (տես՝ Սաղմ. 59:3գ, 4ա): Թշնամիները հարձակվում են նրա Իսրայելի Աստծո հետ ունեցած փոխհարաբերության պատճառով (տես՝ Սաղմոս 2):

**59:4բ-5** Այս երկու համարները կապված են երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ, որոնք կանչում են Աստծուն իրենց ազատելու համար գործի անցնելու:

1. արթնացի՛ր օգնելու, Սաղմ. 59:4բ – BDB 734, KB 802, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 7:6, 35:23, 44:23, 57:8 (երեք անգամ), 73:20, 80:2, 108:2

2. տես, Սաղմ. 59:4բ – BDB 906, KB 1157, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 9:13, 25:18, 19, 80:14, 84:9, 119:153, 159, 139:24

3. արթնացիր, Սաղմ. 59:5 – BDB 884, KB 1098, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 35:23, 44:23

❖ **«օգնիր ինձ»** Սա բառացիորեն նշանակում է «հանդիպիր ինձ»: Այս անձնական կողմը կրկնվում է 10ա-ում:

❖ **«Ով ՏԵՐ, Չորաց Աստված»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

❖ «մի՛ գրթա» Այս բացասող ԲԱՅԸ (BDB 335, KB 334, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) հաճախ է կիրառվում Սաղմոսներում (տես՝ Սաղմ. 4:1, 6:2, 9:13, 25:16, 26:11, 27:7, 30:10, 41:4, 10, 51:1, 56:1, 57:1, և այլն): Այստեղ Սաղմոսերգուն խնդրում է Աստծուն ողորմություն ցույց չտալ իր թշնամիներին, քանի որ նրանք նենգավոր են իրենց անօրենություններով (տես՝ Սաղմ. 109:14, Ես. 2:9, Երեմ. 18:23):

**59:6-7** Մի քանի ժամանակակից թարգմանություններ կան, որոնք Սաղմ. 59:6-7 ներկայացնում են որպես առանձին պարբերություն և սկսում են մի նոր պարբերություն 59:8-10-ով: Դժվար է հասկանալ, թե ինչպես է պետք բաժանել Սաղմոսները տրամաբանական բաժինների:

Սաղմոս 59:6-7 նկարագրում է թշնամիներին որպես՝

1. Հաչող շներ
2. պտտվող շներ  
ա. պաշարման փոխաբերություն (տես՝ Սաղմ. 59:14-15)  
բ. փոխաբերություն նրանց մշտական սնունդ փնտրելու (Սաղմ. 59:15)
3. վայրահաչոց . . . սրեր, տես՝ Սաղմ. 59:7
4. Աստծո վախը չունեն (այսինքն՝ նրանք ասում են, «Ո՛վ է լսելու», տես՝ Հոր 22:13, Սաղմ. 10:4, 11, 13, 64:5, 73:11, 94:7, Եսայի 29:15, Եզեկ. 8:12): Նրանք կա՛մ  
ա. Իսրայելացի աթեիստներ էին  
բ. հեթանոսներ/կռապաշտներ

**59:8** Սաղմոս 59:8 հիշեցնում է ինձ՝

1. Սաղմոս 2:4
2. Սաղմոս 37:13

Այս այս համարի, կարելի է ասել, որ թշնամիները Հեթանոսներ էին, անհավատ զավթիչներ (տես՝ Սաղմ. 59:5,6,7,8,11, 13,14,15):

Սաղմոս 59:8-ի ԲԱՅԵՐԸ երկուսն էլ *Qal* ԱՆԿԱՏԱՐՆԵՐ են, որը շարունակվող գործողություն է արտահայտում (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ ծիծաղում է. . . ծաղրում է անհավատներին իրենց անհավատության և Իր ժողովրդի հանդեպ ամբարտավան մեղադրանքների համար):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 59:9-15**

- <sup>9</sup>Նրանք զորեղ են, բայց ես Քեզ կսպասեմ.  
Քանի որ Աստված է իմ պաշտպանությունը:  
<sup>10</sup>Իմ ողորմության Աստվածն ինձ կհասնի.  
Աստված ինձ իմ թշնամիների վրա նայել կտա:  
<sup>11</sup>Մի՛ սպանիր նրանց, որպեսզի իմ ժողովուրդը չմոռանա.  
Ցիրուցան արա նրանց Քո ուժով  
Ու ցա՛ծ բեր նրանց, ո՛վ ՏԵՐ՝ մեր վահան:  
<sup>12</sup>Նրանք իրենց բերանների մեղքի  
Ու շուրթերի խոսքերի համար իրենց հպարտության մեջ թող բռնվեն,  
Նաև անեժքի ու ստի համար, որ խոսում են:  
<sup>13</sup>Բարկությանը կորցրո՛ւ նրանց,  
Կորցրո՛ւ, և թող չքանան, որպեսզի իմանան,  
Թե Աստված է տիրում Հակոբի վրա՝  
Մինչև երկրի ծայրերը: Սեյա:  
<sup>14</sup>Նրանք վերադառնում են երեկոյան՝ շան պես ոռանալով,  
Եվ քաղաքի շուրջն են պտտվում:  
<sup>15</sup>Թափառում են ուտելիք գտնելու համար,  
Եվ տրտնջում են, երբ չեն կշտանում:

**59:9-13** Աստվածության մի քանի անուններ են կիրառվում: Տես՝ Համատեքստային Հասկացություններ, Գ:

**59:9**

<b>NASB</b>	«նրա գորությունը»
<b>NKJV</b>	«նրա Չորությունը»
<b>NRSV, NJB, JPSOA</b>	«իմ գորությունը»
<b>TEV</b>	«քո գորությունը»

UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 271) տալիս է «իմ գորությունը» խոսքին «D» գնահատական (խիստ կասկածելի): Սա հավանաբար հիմնված է համար 17-ի միևնույն բառերի վրա: Այն աստվածության անուն է:

❖

<b>NASB</b>	«նրա գորության շնորհիվ»
<b>NKJV</b>	«Ով Դու՛ նրա Չորությունը»
<b>NRSV, JPSOA</b>	«Ով իմ գորություն»
<b>NJB, REB</b>	«Իմ գորություն»
<b>LXX</b>	«Ով իմ ուժ»

Կարծում են սա էլ Աստծո անուններից ևս մեկն է (տես՝ Սաղմ. 21:1, 28:7,8, 59:17, 81:1, 118:14): Այն գուցորդվում է «Աստված իմ պաշտպանությունն է» խոսքի հետ:

❖ «**ես Քեզ կսպասեմ**» Այս ԲԱՅԸ (BDB 1036, KB 1581) *Qal* ԸՂՁԱԿԱՆ է, տես՝ Սաղմ. 130:6: Սաղմոսերգուն փափագում էր տեսնել Աստծուն և Նրա հետ լինել:

**59:10** Սա Աստծո ևս մեկ անուններից է (այսինքն՝ «Աստված իմ բարեգլխությունն է»), NKJV տալիս է «Իմ գթառատ Աստվածը», իսկ JPSOA տարբերակը՝ «Իմ հավատարիմ Աստվածը»:

❖ «**Աստված ինձ իմ թշնամիների վրա նայել կտաս**» Սա ևս մեկ մշակութային դարձվածք է հաղթանակի համար (տես՝ Սաղմ. 23:5, 54:7, 91:8, 92:11, 112:8, 118:7):

**59:11** Այս համարը իմ համար զարմանալի է: Սա ինձ հիշեցնում է, թե ինչպես էր ՅԱՀՎԵՆ բնակվում երբայեցի ցեղերի հետ Հեսուի կողմից պարսպապատ քաղաքների գրավումից հետո: Յուրաքանչյուր ցեղը ուներ ռազմական հաղթանակ քանանացի ցեղերից իրենց իսկ տարածքների գրավման մեջ: Նրանք պետք է գործի դնեին իրենց հավատքը: Նա թողել էր որոշակի դիմադրություն, որպեսզի նրանք կարողանային անել հավատքի, Նրա և իրենց մեջ:

Այս ԲԱՅԻ ձևերը հետևյալն են՝

1. Մի սպանիր, Սաղմ. 59:11 – BDB 246, KB 255, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՅԱՀՅԱԿԱՆ իմաստով
2. ցիրուցան արա, Սաղմ. 59:11 – BDB 631, KB 681, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. ցած բեր նրանց, Սաղմ. 59:11 – BDB 432, KB 434, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. կորցրու նրանց, Սաղմ. 59:13 – BDB 477, KB 476, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (երկու անգամ)
5. նույնը ինչ 4-րդ կետը
6. որ չքանան – BDB 34 II (ԲԱՅ չկա անգլերենում)

Այս հրամանները պետք է փոփոխվեն Սաղմ. 59:11ա-ով: Հնարավոր է, որ շփոթմունք կա «ոչ» (ՆՃ – BDB 39) և *էլ* (ՆՃ – ՀՄԱ-ում Աստծո համար կիրառվող ընդհանուր անվան – BDB 42 II) միջև: Բաղաձայնները նույնն են, սակայն տարբեր ձայնավորներով: Սա AB (Էջ՝ 71) տարբերակի առաջարկն է:

❖ «**որպեսզի իմ ժողովուրդը չմոռանա**» ԲԱՅԸ (BDB 1013, KB 1489, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) նաև հանդիպում է 2 Օրինաց 8:11-20, որտեղ ՅԱՀՎԵՆ հորդորում է Իր ժողովրդին չմոռանալ, որ իրենց բարգավաճումը կամ հաղթանակը իրենց շնորհիվ է:

❖ **«մեր վահան»** Այս նկարագրությունը հետ ակնարկ է գցում Աբրահամի հետ ՅԱՀՎԵԻ առաջին հանդիպումներին և խոստումներին, որ Նա տվեց նրան և նրա սերունդներին (տես՝ Ծննդ. 15:1, 2 Օր. 33:29): Այն պարբերաբար կրկնվում է Սաղմոսներում (տես՝ Սաղմ. 3:3, 5:12, 28:7, 115:9-11): Այն Աստծուն ներկայացնում է որպես պաշտպան:

**59:12 «իրենց հպարտության մեջ թող բռնվեն»** BDB 539, KB 530, *Niphal* ԱՆԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով: Սարդկային հպարտությունը և ամբարտավանությունը՝

1. Անկման էությունն են
2. զգվելի է ՅԱՀՎԵԻՆ

Նա չի հանդուրժի այդ (տես՝ Եսայի 2:11-12, 5:15, 10:33, Սոփ. 3:11): Որպես մարդու հպարտության սուրբգրային օրինակ ուշադրություն դարձրե՛ք ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՐԾԵՆԱԼ:

**59:13 «Որպեսզի իմանան, թե Աստված է տիրում Հակոբի վրա՝**

**Մինչև երկրի ծայրերը»** Տիեզերական այս տարրը վճռորոշ է մեր աշխարհում Աստծո գործը հասկանալու համար (տես՝ Սաղմ. 2:8, 58:11, 67:7, 72:8, 17, 96:13, 98:9, Եսայի 45:22, 49:6, 52:10, Երեմ. 16:19, Միքիա 5:4, Մատթ. 25:32):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

❖ **«Սեյա»** Տես Սաղմ. 3:2 և Սաղմոսների Ներածություն, VII:

**59:14-15** Այս համարները կապ են հաստատում Սաղմ. 59:6-7-ի հետ: Սաղմ. 59:6 և 14 կրկներգ են: Սաղմ. 59:7 և 15 երկուսն էլ թշնամիներին բնութագրող արտահայտություններ են: Նրանք սարսափելի գիշատիչներ են:

**59:14**

**NASB, NRSV, JPSOA**      **«ոռնում են»**

**NKJV**                              **«մռնչում են»**

Այս արմատը (BDB 534 II) կարող է նշանակել՝

1. գիշերը անցկացնել – BDB 533 I (սա MT տարբերակն է նշում, տես՝ Սաղմ. 55:7)
2. մռնչալ – BDB 534 II

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 59:16-17**

**<sup>16</sup>Բայց ես փառաբանելու եմ Քո զորությունը,  
Առավոտյան բարձր ձայնով Քո զորությամբ եմ ցնձալու,  
Քանի որ Դու ինձ պահապան եղար ու ապաստան՝  
Իմ նեղության օրը:  
<sup>17</sup>Քե՛զ, ո՛վ իմ զորություն, Քեզ սաղմոս եմ երգելու,  
Քանի որ Աստված իմ պաշտպանն է  
Եվ իմ ողորմության Աստվածը:**

**59:16-17** Սաղմոսերգուն հակադրում է (այսինքն՝ «բայց ես») իր ապրելակերպը նրանց շարժառիթների հետ:

1. ես փառաբանելու եմ Քո զորությունը, Սաղմ. 59:16
2. ուրախությամբ՝ բարձր ձայնով Քո ողորմությունն եմ երգելու, Սաղմ. 59:16
3. Փառաբանություն՝ սաղմոս եմ երգելու Քեզ, Սաղմ. 59:17

Այս փառաբանության երգերի պատճառը ՅԱՀՎԵՆ է, քանի որ Նա եղել է՝

1. նրա պաշտպանը (BDB 960 I)
2. նրա ապաստարանը (BDB 631) նեղության օրը, տես՝ Երեմ. 16:19

3. իր ամբոցն է (BDB 960 I), տես՝ Սաղմ. 9:9, 59:9, 62:2,6

4. նրան ողորմություն է ցույց տվել (BDB 338)

Փակման այս համարում կրկնվում են ՅԱՀՎԵԻՆ նկարագրող մի քանի կարևոր աստվածաբանական տերմիններ:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ովքե՞ր են թշնամիները: Ինչո՞ւ է թվում, որ երկու խումբ կա:
2. Արդյո՞ք սաղմոսերգուն Սաղմ. 59:3գ, 4ա-ում անմեղություն է հայտարարում:
3. Ո՞րն է «վեր կաց» և «արթնացիր» խոսքերի հիմքում ընկած նկարագրությունը:
4. Թվարկե՛ք այս Սաղմոսի տիեզերական տարրերը: Ի՞նչ են դրանք նշանակում:
5. Սաղմոս 59:11 կարծես թե շփոթեցնող է: Ինչո՞ւ: